

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 77-Լ**

**21/07/2015թ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 26-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 34-րդ հոդվածի 6-րդ մասի 8-րդ կետը և ղեկավարվելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կանոնադրությամբ՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .**

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 26-ի «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի կանոնները հաստատելու վերաբերյալ» թիվ 26-Լ որոշմամբ հաստատված «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» RL 1-013 կանոններում (այսուհետ՝ Կանոններ) կատարել լրացումներ՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշմամբ Կանոններում կատարված լրացումները ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցման հաջորդող օրը:

**«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ խորհրդի նախագահ՝**

**Ներսես Երիցյան**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ խորհրդի 21/07/2015թ թիվ 77-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ խորհրդի նախագահ

\_\_\_\_\_ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

«\_\_\_» \_\_\_\_\_ 2015թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

\_\_\_\_\_ Արթուր Զավադյան

### **ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-013**

#### **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ**

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՈՒՅՔԻՆ  
ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՈՒ  
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ, ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՈՒ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԻՑ ԶՐԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՈՒ ՀԻՄՔԵՐԻ)

(ԼՐԱՑՈՒՄՆԵՐ)

1. 27-րդ կետը լրացնել 7.1-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1) Բյուրոյի կողմից պատվիրված փորձաքննությունների գծով նաև հավելվածի տեսքով՝ սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված զննության ընթացքում կազմված վնասված դետալների և (կամ) հանգույցների ցանկը (համաձայն Ձև 10-ի)՝ ստորագրված համապատասխան տուժողի կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաև, ներկայության դեպքում, վնաս պատճառողի (վնաս պատճառողի ներկայացուցչի) կողմից,»:

2. 49-րդ կետը լրացնել 6.1-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1) Բյուրոյի կողմից պատվիրված փորձաքննությունների գծով նաև հավելվածի տեսքով՝ սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված զննության ընթացքում կազմված վնասված դետալների և (կամ) հանգույցների ցանկը (համաձայն Ձև 10-ի)՝ ստորագրված համապատասխան տուժողի կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաև, ներկայության դեպքում, վնաս պատճառողի (վնաս պատճառողի ներկայացուցչի) կողմից,»:

3. Լրացնել Ձև 10-ով՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

**Ձև 10**

**«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների**

**ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ԴԵՏԱԼՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՑԱՆԿ**

Ցանկը կազմելու օրը և ժամը \_\_\_/\_\_\_\_\_/20\_\_թ, ժամը`\_\_\_:

Ցանկը կազմելու վայրը`

*(մարզի և քաղաքի (գյուղի) անվանումը, փողոցի անվանումը, մոտակա կողմնորոշիչի անվանումը)*

**1. ՎՆԱՍՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Մակնիշը	Հաշվառման համարանիշը	Հաշվառման վկայականի համարը	Արտադրության տարեթիվը	Վազքը (կմ)	Նույնացման համարը
...	...	...	...	...	...

**2. ՎՆԱՍՎԱԾ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ**


...

**3. ԱԿՆԱԴԻՏԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Հ/հ	վնասված դետալների (ագրեգատների) անվանումը	վնասված դետալի (ագրեգատի) բնութագիրը				
		դեֆորմացված	քերծված	կոտրված	մինչև ճՏՊ-ն տվյալ դետալի (ագրեգատի) վնասվածքները (առկայության դեպքում)	այլ նշումներ
1.		<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>		

...						
-----	--	--	--	--	--	--

**4. ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ\***



*Հավաստում եմ, որ տեղյակ եմ (ինձ բացատրվել է, մատնացույց է արվել), թե վերոնշյալ դեղալները (ազրեգապները) ավտոտրանսպորտային միջոցի որ մասում են տեղակայված, կոնկրետ որ դեղալների (ազրեգապների) մասին է նշում կատարված,*

*Հավաստում եմ նաև, որ սույն արձանագրությամբ ներկայացված տվյալները ճիշտ են, համապատասխանում են իրականությանը, և գիտակցում եմ, որ կեղծ տեղեկություններ ներկայացնելու դեպքում օրենքով սահմանված կարգով կարող եմ ենթարկվել քրեական պատասխանատվության, իսկ ներկայացված հատուցման դիմումը կարող է մերժվել:*

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
<b>Տուժող կամ վերջինի ներկայացուցիչ</b>		<b>Զննություն իրականացրած անձ</b>	
_____	_____		
անուն/ազգանուն	ստորագրություն		
<b>Վնաս պատճառող կամ վերջինի ներկայացուցիչ</b>			
_____	_____		
անուն/ազգանուն	ստորագրություն	_____	_____
		անուն/ազգանուն	ստորագրություն

\* վնասվածքները նկարագրվում են գծապատկերի համապատասխան մասում հետևյալ նշագրումների կատարման միջոցով՝

- E3 Գրեթե աննշան փոս ընկած կամ քերծված տեղեր
- U1 Մատնաչափ փոս ընկած տեղ
- U2 Ափի չափ փոս ընկած տեղ
- U3 U2-ից ավելի մեծ փոս ընկած տեղ
- Y1 Մատնաչափ քերծվածք
- Y2 Ափի չափ քերծվածք
- Y3 Y2-ից ավելի մեծ քերծվածք
- X Ամբողջովին վնասված մակերես